ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2015թ. մայիսի 25-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է <<Մաքուր երկաթի գործարան>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. <<Մաքուր երկաթի գործարան>> ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի գրությունը՝ լիցենզիայի ձեռք բերման վերաբերյալ
2. <<Մաքուր երկաթի գործարան>> ԲԲԸ-ի կանոնադրության պատճեն
3. Ձեռնարկության պետական գրանցման վկայականի պատճենը
4. <<Ոչ մետաղագործական ֆերոհամահալվածքների խարամ>> և <<Գիպսային շլամ վնասակար խառնուկներով>> թափոնների անձնագրերի պատճենները
5. Տեղեկանք Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունից՝ հաշվառման մեջ լինելու մասին:

Հայտատուի կողմից ներկայացվել են նաև լրացուցիչ նյութեր, մասնավորապես, ծառայությունների մատուցման պայմանագրի պատճեն, գործարանի արտանետումների հաշվարկային տվյալները, կոյուղաջրերի նմուշի քիմիական անալիզի արդյունքները, տեղեկատվություն վտանգավոր թափոնների փոխադրումն աղբավայր իրականացնող մեքենաների և կազմակերպության սարքավորումների վերազինման վերաբերյալ:

Հաշվի առնելով վտանգավոր թափոնների անվտանգ փոխադրման և տեղադրման հարցի կարևորությունը և ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Գրիգորյան
Ա. Ալեքսանդրյան
Ա. Մարտիրոսյան
Ե. Տերտերյան
Ա. Եգանյան
Ս. Խաչատրյան
Կ. Կարապետյան
Ա. Ղազարյան
Ա. Առուստամյան
Գ. Ամատունի
Ի. Հակոբյան